

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
2011-2015ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարզում իրականացվել են

h/h	Միջոցառման անվանում	Արդյունքը
1	2	3
1	Իրականացվել են հանդիպումներ մարզի գյուղական համայնքների ակտիվ բնակիչների հետ՝ կանանց ներկայացվածությունը ՏԻՄ-երում բարձրացնելու նպատակով:	Լոռու մարզի 113 համայնքների ղեկավարներից 4-ը կանայք են, ավագանու կազմում կանայք 15,15% են: 2015թ-ի հունիսի 7-ի ՏԻՄ ընտրություններում մարզի երեք համայնքներից երկուսում ունենք կին թեկնածուներ:
2	Կազմակերպվել են կանանց լիդերության դպրոցի <<Բարձրագույն քաղաքական դասընթացներ>> 9 հոսք:	48- ժամյա պարապունքների ընթացքում 225 մասնակիցների հաղորդվել են քաղաքական եւ քաղաքացիական, տնտեսագիտական, իրավական ոլորտի գիտելիքներ, հասարակական նախաձեռնությունների կազմակերպման հմտություններ:
3	Կազմակերպվել են սեմինար-պարապունքներ, կլոր սեղան քննարկումներ պետական ծառայողներին և քաղծառայողներին գենդերային գիտելիքների հաղորդման նպատակով:	Բարձրացել է պետական ծառայողների և քաղծառայողների գենդերային զգայունությունը:
4	Կազմակերպվել են կլոր սեղան քննարկումներ մարզի 8 քաղաքներում: Մասնակցել են տեղերի քաղաքական կուսակցությունների, ՀԿ-ների ներկայացուցիչներ, քաղաքապետարանների աշխատակիցներ, համայնքի ակտիվ բնակիչներ: Քննարկվել են հանրության մեջ գենդերային հիմնախնդիրների լուծման անհրաժեշտության ընկալման և	Բարձրացել է հանրության մեջ գենդերային հիմնախնդիրների լուծման անհրաժեշտության ընկալման և գենդերային զգայնության մակարդակը:

	գենդերային զգայնության բարձրացման հնարավորությունները եւ մեխանիզմները	
5	Կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ, մարզի տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչների, բուհերի լրագրության բաժինների մագիստրատուրայի ուսանողների մասնակցությամբ:	Բարձրացվել է զանգվածային լրատվամիջոցների գենդերային զգայունությունը:
6	Ինտեգրվել է գենդերային բաղադրիչը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրում :	Սոցիալ-տնտեսական անհավասարության նվազեցում, կանանց և տղամարդկանց սոցիալական կարգավիճակի անհավասարակշռության մեղմացում:
7	Իրականացվել են միջոցառումներ, որոնք խթանել են կանանց ձեռնարկատիրական գործունեությունը, կանանց տնտեսական նախաձեռնությունները:	Կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնում, աղքատության հաղթահարում և շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի ձևավորում:
8	Կազմակերպվել են մարզային համաժողովներ մարզպետի, փոխմարզպետների, համայնքի ղեկավարների, համայնքի աշխատակազմերի ղեկավարների, ավագանու անդամների, համայնքի ակտիվ բնակիչների մասնակցությամբ:	Վեր են հանվել մարզում առկա գենդերային հիմնախնդիրները, մշակվել են դրանց հաղթահարման կոնկրետ ռազմավարական ծրագրեր:
9	Կազմակերպվել են մարզի 11 դպրոցներում և ՎՊՀ-ում <<Գենդերային գիտելիքների հիմունքներ>> դասընթացներ:	Մանկավարժական կադրերի իրազեկում գենդերային հիմնախնդիրների շուրջ, գենդերային կարծրատիպերի հաղթահարում, գենդերային հավասարակշռությունն ապահովող դաստիարակության և ուսուցման իրականացում:
10	Իրականացվել են կանանց վերարտադրողական առողջությանը, սեռով պայմանավորված ընտրովի աբորտների կանխարգելմանը նպաստող իրազեկման հանդիպումներ մարզի տարբեր համայնքներում:	Սեռով պայմանավորված ընտրովի աբորտների թվի կրճատում, առողջ ապրելակերպի ու անվտանգ սեռական վարքագծի ձևավորում:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելիս նախատեսել համայնքի զարգացման քառամյա ծրագրում և գյուղական համայնքների ինքնակառավարման մարմինների գործելակերպում գենդերային բաղադրիչի ինտեգրման հանձնաժողովների ստեղծումը:
2. Ձեռնարկել հատուկ միջոցներ ապահովելու կանանց 30% ներկայացվածությունն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների որոշումների ընդունման մակարդակներում:
3. <<ՀՀ Ընտրական օրենքում>> փոփոխություններ կատարելիս նախատեսել գենդերային քվոտաների ներդրում խոշոր համայնքների մակարդակով:
4. <<ՀՀ Քաղաքական ծառայության մասին>> օրենքում փոփոխություններ կատարելիս նախատեսել հարցաշարերում գենդերային հիմնախնդիրներին վերաբերվող հարցերի ներառում:
5. Ստեղծել ուսումնամեթոդական հիմք՝ գենդերային գիտելիքների հիմունքների դասավանդման համար:
6. Ներդնել օրենսդրության գենդերային փորձաքննության անցկացման չափանիշներ: